# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

## << ԳՊՄԻ-ՊԸԱՇՁԲ-16/1 >> ծածկագրով պարզեցված ընթացակարգով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Գյումրի <<04>> նոյեմբեր 2016թ.

ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Սողոյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Պետրոսյանը, Վ. Բեկզատյանը, Վ. Մուրադյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ղանդիլյանը

### 1. Պարզեցված ընթացակարգով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

(Ս. Սողոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1. | <<ՀԱՏՄ>> ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ, Մայիսյան արդյունաբերական հանգույց հեռ. 031262900 |

1.2 Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

<<ՀԱՏՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.3 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

<<ԳՊՄԻ-ՊԸԱՇՁԲ-16/1>> ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման հրավերով սահմանված <<ՀԱՏՄ>> ՍՊԸ-ն փակ կնքված ծրարով ներկայացրել է դիմում պարզեցված ընթացակարգով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու, հայտարարություն պարզեցված ընթացակարգով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին, հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, հայտարարություն տեխնիկական միջոցների մասին, հայտարարություն ֆինանսական միջոցների մասին, հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, գնի առաջարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, հայտարարություն եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և երկու օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված և բոլոր պատճեն հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

1.4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

<<ՀԱՏՄ>> ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հայտի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին: